

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քաղսիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «ՆԶՊ» առարկայի ուսուցչի (զինդել՝ 1 դրույք) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- 1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար (3×4),
- 2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- 3) անձը հաստատող փաստաթուղթ,
- 4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն (Ձև 5),
- 6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ զինվորական գրքույկ,
- 8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),
- 9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է մասնակցին: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. **սեպտեմբերի 13-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Կոտայքի մարզի Քաղսիի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 11 փ., 1-ին փակուղի:

Տեղեկությունների համար զանգահարել 093-65-17-90 հեռախոսահամարով: